

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս.ԵՐՐՐՈՐԴ. ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵ ՊԵՑԻՈՅ

ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ
ԹՈՐՈՆԹՕ

ՓԵՏՐ. 27, 1983

Ս.Երրորդութիւն Հայց. Առաք. Եկեղեցւոյ Տարեկան Անդամական Ընդհ. Ժողովը տեղի ունեցաւ Եկեղեցւոյ սրահին մէջ Կիրակի 27 Փետրուար 1983 կ.վ. ժամը 2:45-ին: Ժողովը ի պաշտօնէ կը նախապահէր ծուխիս հոգեւոր հովիւ Արժ. Տ. Յուսիկ Զինյ. նշանեան:

Ժխական Խորհուրդի ատենապետ Պրն. Սարգիս Զիլինկիրեան անդամները կարգի հրաւիրեց եւ ժողովը սկսաւ ըստ օրակարգի:

Արժ. Տ. Յուսիկ Զինյ. նշանեան աղօթքով քացաւ ժողովը օրհնեց ներկաները եւ յաջողութիւն մաղթեց ժողովականներուն:

Ժխական Խորհուրդի ատենապետ Պրն. Սարգիս Զիլինկիրեան յայտարարեց թէ 92 տրատու անդամներ ներկայ էին, եւ թէ ժողովը քացուած է օրինաւորապէս:

Պրն. Ատենապետը, հրաւիրեց ընտրողական Յանձնախումբի խօսնակը: Պրն. Հրաչ Պոյաճեանը ներկայացուց օրուայ դիւանի թեկնածուները, հետեւեալ կարգով. - Ատենապետ՝ Վարդան Վարդանեան, Անգլերէնի ատենադպրուհի՝ Օր. Մոնա Սէլեան, եւ Հայերէնի ատենադպիր՝ Պրն. Հայկ Միսաքեան:

Ժողովը միաձայնութեամբ վաւերացուց այս դիւանի կազմը:

Օրուայ Ընդհ. Ժողովի ատենապետ Վարդան Վարդանեան շնորհակալութիւն յայտնեց իրենց վստահութեան համար եւ ըսաւ թէ թուր առաջարկները պէտք է գրաւոր կերպով ներկայացուին դիւանիս, այլապէս նկատի պիտի չ'առնուին: Նոյն ատեն խնդրեց ժողովականներէն որ ծուխ ծխելը դադրեցուի, եւ ծխել փափաքողները սրահէն դուրս ելլեն եւ հոն ծխեն:

Պրն. Հրաչ Պոյաճեան ձայն առնելով ժողովականներուն յայտնեց թէ այս իրիկուն Հայրենիքէն անուանի վիպասան Սէրօ Խանգաղեանը իր վերադարձի ճամբուն վրայ Թորոնթօ պիտի գտնուի կարճ պահի մը համար, եւ իր ներկայութեամբ այս ժողովի ընթացքին մեզ պիտի պատուէ:

Օրակարգի բարեփոխման առնչութեամբ առաջարկներ ներկայացուեցան ժողովին: Պրն. Հրաչ Պոյաճեան առաջարկեց որ յարակից մարմիններու տեղեկագրութիւնը յաջորդէ ժխական Խորհուրդի տեղեկագրին եւ նոր հարցերը յաջորդեն ժխական Խորհուրդի ընտրութիւններուն:

ժողովը վաւերացուց այս առաջարկը:

Ճարտարագէտ Պրն. Թազուր Յոթեան առաջարկեց որպէսզի շինութեան յանձնախումբի տեղեկագրէն յետոյ աւելցուի ճարտարագէտի տեղեկագրութիւնը:

Պրն. Հայկ Սէլեան ըսաւ թէ, ճարտարագէտի տեղեկագրութիւնը անկախ եւ անձնական բնոյթ ունի եւ պէտքէ որ եկեղեցւոյս յարակից մարմիններու կողքին ներկայացուի:

Պրն. Հրաչ Պոյաճեան թելադրեց որ նոր հարցերու բաժնին տակ գայ այդ:

Պրն. Թազուր Յոթեան ըսաւ թէ պիտի փափաքէր որ շինութեան յանձնախումբէն վերջ ներկայացնելու իր տեղեկագրութիւնը. որովհետեւ հոն՝ իր անձին վերաբերեալ արտայայտութիւններ կան, եւ քանի որ ինք իր թեկնածութեանը դրած է իբր եկեղեցւոյս պատգամաւոր, կրնայ իր ընտրութիւնը ատոր արդիւնքէն ազդուիլ:

Պրն. Սարգիս Տէքիրմէնճեան թելադրեց որ զատ ժողով մը գումարուի այս հարցով եւ նպատակին համար:

Պրն. Պարգեւ Խոճաճեան ըսաւ թէ ճարտարագէտին տեղեկագրութիւնը 'բրօֆէշընըլ' բնոյթ ունի եւ իբր այդ պէտք է որ նկատի առնուի:

Օրուայ ատենապետը ժողովականներուն ուշադրութեան յանձնեց թէ. երկու քաժնի մէջ ամփոփուած է այս հարցը, կամ այն է թէ այս ժողովի ընթացքին շինութեան յանձնախումբին տեղեկագրութեանէն ^կ ընդունուի ճարտարագէտին տեղեկագրութիւնը եւ կամ զատ բացառիկ ժողովի մը/ընթացքին կը ներկայացուի այդ տեղեկագրութիւնը:

Բաց քուէով 36-ի դէմ 45, որոշուեցաւ ճարտարագէտի տեղեկագրութիւնը զատ ժողովի մը մէջ ներմուծել:

Օրակարգը վաւերացուեցաւ առաջարկուած փոփոխութիւններէ ետք:

Պրն. Ժիրայր Երէցեանի հետաքրքրութիւնը գոհացնելու համար, ժամը 2:58-ին կ.վ. ներկայ անդամներու թիւը 107-ի թարծրացած էր:

Օրուայ դիւանի Անգլերէնի ատենադպրուհի Օր. Մոնա Սէլեան, կարդաց անցեալ տարուայ Տարեկան Ընդհ. ժողովի ատենագրութիւնը Անգլերէն լեզուով եւ փոքր սրբագրութիւններէ վերջ, Պրն. Խաչիկ Գուլումճեանի առաջարկով եւ Պրն. Մատթ Մամուրեանի երկրորդումով ատենագրութիւնը վաւերացուեցաւ:

Ժամը 3:45-ին ներկայ տրատու անդամներուն թիւը թարծրացած էր 131-ի:

Ժխական Խորհուրդի ատենապետը Պրն. Սարգիս Զիլիսկիրեան յաւելուածաբար կարդաց եկեղեցւոյս գոյքերու ցանկը պատրաստող Պրն. Հայկ Միսաքեանի նամակը: Գոյքերու ցանկը թուր գործնական նպատակներու համար պատրաստ է եւ ի հարկին պիտի նպաստէ ծխական Խորհուրդի աշխատանքներուն, ի մասնաւորի ապահովագրական պահանջներու առնչութեամբ: Ապա շարունակելով կարդաց նաեւ ծխական Խորհուրդի Անգլերէն լեզուով պատրաստուած տեղեկագրութիւնը:

Պրն. Կարօ Մարթին թելադրեց որ Արմէն-Օնթարիոյի հետ ստորագրուի՞ր իբր համաձայնութեան պատճէնը կարդացուի, քանի որ անվաւեր համաձայնագրի օրինակը պատրաստ է:

Պրն. Վարդան Վարդանեան թելադրեց, որ աւելի լաւ կ'ըլլայ եւ պատշաճ եթէ այս հարցը շինութեան յանձնախումբի տեղեկագրին ատեն քննուի:

Պրն. Սարգիս Տէքիրմէնճեան առաջարկեց որպէսզի եկեղեցւոյս հողի գնման եւ Արմէն-Օնթարիոյի հետ վերջնական համաձայնութեան հարցերը սերտելու համար, ծխական Խորհուրդը մասնաւոր Ընդհանուր անդամական ժողով մը գումարէ:

Պրն. Հրաչ Պօյաճեան երկրորդեց եւ ժողովը մեծամասնութեան ձայնով որոշեց ընդգրկել այս առաջարկը:

Պրն. Հրանդ Պարտազճեան մատնանշեց թէ 1983 տարւոյ ընթացքին պատահած ձեռնարկներ պէտք է որ 1982 տարւոյ տեղեկագրի մէջ մաս կազմեն:

Ատենապետ Վարդան Վարդանեան այս դիտողութիւնը ծխական Խորհուրդի ուշադրութեան յանձնեց:

Պրն. Հրանդ Սուին փափաք յայտնեց որ Յունուար 23-ի քացառիկ Ընդհ. ժողովի տեղեկագիրն ալ այս Ընդհ. ժողովին կարդացուէր, որովհետեւ կը վերաբերեր նոր եկեղեցիի հողի գնման եւ շինութեան հարցերուն:

Պրն. Պարզեւ Թոճաճեան առաջարկեց որ յաջորդ անդամական ժողովին կարդացուի այդ տեղեկագիրը:

Երկրորդուեցաւ եւ մեծամասնութեամբ ընդունուեցաւ:

Նոր Հովիւի մը մասին կարծիքներու փոխանակում տեղի ունեցաւ: Ընդհանուր համաձայնութեամբ գոյացաւ որ այս հարցը նիւթական տեղեկագրին հետ միասին քննուի:

Պրն. Ժոն Յովակիմեան, առաջարկեց որ 1982 տարւոյ ծխական Խորհուրդի տեղեկագիրը իր սրբագրութիւններով գվաւերացուի:

Պրն. Եզնիկ Պօյաճեան երկրորդեց եւ ժողովը միաձայնութեամբ վաւերացուց տեղեկագիրը:

Պրն. Մուրատ Պահուտեան ըսաւ թէ փաստաբան Պրն. Պերճ Փափագեանը եկեղեցաշինութեան կապակցութեամբ իր տարած աշխատանքները ձրիօրէն տրամադրած է եկեղեցւոյս, եւ լաւ կ'ըլլայ որ ծխական Խորհուրդի տեղեկագրին մէջ առ այդ արձանագրուի եւ ներկայացուի:

Ծխական Խորհուրդի գանձապահ Պրն. Յարութիւն Եսայեան ներկայացուց 1982 տարւոյ նիւթական համարատուութիւնը:

Պրն. Սարգիս Տէքիրմէնճեան փափաքեցաւ գիտնալ թէ ինչու ' 'հաշուակալներու' ' համար 1,500 Տոլարի գումար մը յատկացուած է պիւտճէին մէջ:

Պրն. Սարգիս Տէքիրմէնճեանի հարցումին՝, գանձապահը ըսաւ թէ ինք՝ իրապէս այդ հարցի մասին հետաքրքրութիւն ունենալուն համար չէ որ կը հարցնէ, այլ կ'ուզէ ինձի նեղ դրութեան մէջ դնել:

Պրն. Տէքիրմէնճեան թողոքեց իր անձին հանդէպ ունեցած այս արտայայտութեան համար:

Ատենապետը դիտողութիւնը արձանագրել տուաւ:

Հարցումներ ուղղուեցաւ գանձապահին, Պրնք. Ժիրայր Երէցեանի, Լեւոն Եազըմեանի, Դանիէլ Զարուկեանի, Տիկ. Արշալոյս Գանտահարեանի, Հրանդ Սուրիսի Տիկ. Անայիս Օրջանեանի, Ստեփան Սէմէրճեանի եւ Օր. Պէթի Ունճեանի որոնք բաւարարուեցան գանձապահի տուած բացատրութիւններով:

Եկեղեցւոյս Շաբաթօրեայ վարժարանի Տնօրէնուհի Տիկ. Արշալոյս Գանտահարեան հարցուց թէ վարժարանիս պատկանող 10 հարկ տոլարի գումարը ինչու՞ ցոյց չէ տրուած:

Դիտողութիւնը տեղին գտնուեցաւ, եւ որոշուեցաւ յառաջիկայ տարի ծխական խորհուրդի գանձապահի տեղեկագրութեան մէջ առանձինն ցոյց տրուի:

Պրն. Հայկ Սէլեան բացատրութիւններ տուաւ Պապայեան ֆոնտի Ս. Երրորդ. Հայց. Առաքելական եկեղեցւոյ անուան պահ դրուած գումարին մասին:

Պրն. Պէնի Ամբակումեան հարցուց թէ եկեղեցւոյ պաշտօնէութեան ամսավճառները յաւելում չեն կրած անցեալ տարի:

Գանձապահը ըսաւ թէ Ապրիլ ամսուն կը տրուին յաւելումները:

Պրն. Հայկ Սէլեան հաշուեթննիչ յանձնախումբի անունով կարդաց իրենց տեղեկագրութիւնը:

Եկեղեցւոյս նիւթական տեղեկատուութիւնը գտած էին կարգին եւ ընդունուած ըստ հաշուակալական կանոններու եւ ձեւերու:

Պրն. Հրաչ Պոյաճեան առաջարկեց նիւթական տեղեկատուութեան վաւերացումը.

Պրն. Ժոն Յովակիմեան երկրորդեց եւ ժողովը միաձայնութեամբ վաւերացուց:

1983 Տարւոյ նախատեսուած պիւտճէն ներկայացուց եկեղեցւոյս գանձապահը:

Պրն. Սէմ Օրջանեան տեղեկութիւններ խնդրեց մնայուն հովիւ մը ունենալու մասին եւ առ այդ փափաքեցաւ որ մասնաւոր գումար մը յատկացուի նախատեսուած պիւտճէին մէջ:

Պրն. Պարգեւ Խոճաճեան պատասխանեց ըսելով նախ գտնանք ենթական յետոյ յորոշենք գումարը:

Պրն. Սեդրակ Ատուրեան խնդրեց որ անմիջապէս անցնինք աշխատանքի եւ ունենանք մեր մնայուն հովիւը:

Պրն. Հայկ Սէլեան իր կարգին ձայնակցեցաւ այդ թելադրանքին:

Տիկ. Ալիս Սէլեան ըսաւ թէ, եթէ նոր հովիւի թեկնածուներ կան, այդ անունները կարդացուին:

Օրուայ ընդհ. ժողովի Ատենապետը դիտել տուաւ թէ. այս նիւթը ժողովի օրակարգէն դուրս է, եւ կարելի է մասնաւոր ժողովի մը մէջ մանրամասնօրէն քննել այս հարցը:

Պրն. Հրանդ Սուլին առաջարկեց որ հովիւի յատկացումը աւելցուի 16 հազարէն 25 հազարի եւ ընդհանուր նախատեսուած 1983-ի պիւտճէն ըլլայ 110 հազար փոխան 101 հազարի ու վաւերացուի:

Պրն. Սէմ Օրջանեան երկրորդեց, ժողովը միաձայնութեամբ վաւերացուց 1983 տարւոյ նախատեսուած պիւտճէն:

Թեմական պատգամաւոր Պրն. Հրանդ Սուլին ներկայացուց իր տեղեկագիրը:

Պրն. Պարգեւ Խոճաճեան հարց տուաւ թէ Թեմական Պատգամաւորական ժողովի կեցուածքը ինչ էր Ս. Խաչ եկեղեցւոյ հանդէպ:

Պատգամաւոր Պրն. Հրանդ Սուլին ըսաւ թէ Ս. Խաչ անունով եկեղեցի մը այլեւս գոյութիւն չունի, պատգամաւորական ժողովի առաջ, քանի որ մեր Թեմի Առաջնորդը լուծած է զայն եւ հետեւաբար որեւէ արարողութիւն եթէ տեղի կունենայ, ապօրինի է:

Ժողովը միաձայնութեամբ վաւերացուց այս տեղեկագիրը:

Եկեղեցւոյս շինութեան յանձնախումբի տեղեկագիրը կարդաց յանձնախումբի Ատենապետ Պրն. Պարգեւ Խոճաճեան:

Ժխական Խորհուրդի ատենապետը, այս տեղեկագրի որոշ մասեր ժխտական եւ անպաստ գտնելով, խօսք առաւ եւ ինք իր կարգին, ի դիմաց ժխական Խորհուրդին բացատրութիւններ տուաւ:

Օրուայ Ատենապետի արտօնութեամբ, Պրն. Խոճաճեան շարունակելով, մանրամասն կերպով իր դիտողութեանց մասին բացատրութիւններ տուաւ:

Պրն. Սարգիս Զիլինկիրեան իր կարգին այդ դիտողութիւններուն տուաւ իր մանրամասն բացատրութիւնները:

Երկուստէք տրուած բացատրականները բաւարար համարելով Ատենապետ վարդան վարդանեան խօսք տուաւ ճարտարագէտ Պրն. Թազուր Յոթեանին:

Ան, մանրամասն պատասխաններ եւ լուսաբանութիւններ տուաւ իր մասին եղած արտայայտութիւններուն առնչութեամբ եւ ժողովուրդը լուսաբանելու համար, 100 տպագրուած թուղթեր ներկաներու տրամադրութեան տակ դրաւ, ուր ճարտարագէտի համար պահանջուած գումարին մանրամասնութիւններ կը տրուէին:

ծխական խորհուրդի Ատենապետը թելադրեց որպէսզի շինութեան յանձնախումբի տեղեկագիրը փոփոխութեան ենթարկուի եւ ցոյց տրուած ճարտարագէտի սակը 188,760.00-ի տեղ ըլլայ 160,000.00:

Ի դիմաց շինութեան յանձնախումբի Պրն. Խոճաճեան ըսաւ թէ այդ չենք փոխել եւ ընդհ. ժողովը կրնայ չ'վաւերացնել այդ տեղեկագիրը: Եւ այնպէս ալ եղաւ:

Այս տեղեկութիւններէ վերջ Ատենապետ վարդան վարդանեան յանձնարարեց որ մասնաւոր ծխական Անդամական ընդհանուր ժողով մը գումարուի զբաղելու այս եւ իր յարակից հարցերով:

Պրն. Սարգիս Տէքիրմէնճեանի հետեւեալ առաջարկը` 'կ'առաջարկեմ որ եկեղեցւոյ շինութեան հարցին առնչութեամբ ինչպէս նաեւ այդ հարցին հետ կապ ունեցող հողի գնման եւ Արմէն-Օնթարիօ-ի հետ. վերջնական համաձայնութեան հարցերը եւս սերտելու համար, ծխական խորհուրդը ընդհանուր ծխական ժողով մը գումարէ մօտ ապագային':

Երկրորդուելով Պրն. Հրաչ Պոյաճեանի կողմէ որդեգրուեցաւ:

Ս.Սահակ Ս.Մեսրոպ Ազգ. Եթթ. վարժարանի տեղեկատուութիւնը մեծ հպարտով եւ միաձայնութեամբ վաւերացուեցաւ:

Պրն. Թորգոմ Զապուհեանի գնահատական արտայայտութեանց. արձագանք եղաւ, եւ ընդհ. ժողովը:

Ս.Երրորդ. Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ վարժարանի տեղեկագիրը Պրն. Եզնիկ Պոյաճեանի առաջարկով եւ Պրն. Սեդրակ Ատուրեանի երկրորդումով միաձայնութեամբ վաւերացուեցաւ:

Պրն. Հրանդ Սուին առաջարկեց որպէսզի ընդհ. ժողովը իր գնահատական արտայայտութիւնը արձանագրէ տարուած գովելի աշխատանքին համար: Միաձայնութեամբ ընդունուեցաւ:

Հայաստանեայց Եկեղեցւոյ Երիտասարդաց կազմակերպութեան տեղեկագիրը նոյնպէս հպարտով, միաձայնութեամբ վաւերացուեցաւ, Պրն. Եզնիկ Պոյաճեանի առաջարկով եւ Պրն. Պէնի Ամբակումեանի երկրորդումով:

Օր. Մոնա Սէլեան Ատենապետուհին Եկեղեցւոյ երիտասարդաց կազմակերպութեան, այս երեւոյթէն նեղուած իր մտահոգութիւնները յայտնեց, ըսելով թէ' ՀԵՆԿԱ-ի մէկ տարուան աշխատանքի տեղեկագիրը առանց ուսումնասիրելու եւ քննարկելու, այսպէս շուտով վաւերացնելը բնաւ ճիշդ չէ, մեզի համար յուսախաբութիւն կը պատճառէ:'

Պրն. Սարգիս Զիլինկիրեան իր գնահատանքի արտայայտութիւնները ունեցաւ ՀԵՆԿԱ-ի մասին եւ ընդհանուր ժողովը միաձայնութեամբ ընդունեց:

Եկեղեցւոյս Տիկնանց Միութեան տեղեկագիրը Պրն. Եզնիկ Պոյաճեանի առաջարկով եւ Պրն. Թազուր Յոքեանի երկրորդումով եւ միաձայնութեամբ ընդունուեցաւ եւ վաւերացուեցաւ:

Պրն. Եզնիկ Պոյաճեանի գնահատական արտայայտութիւնը միաձայնութեամբ ընդունուեցաւ:

Տարեց Քաղաքացիներու Միութեան տեղեկագիրը միաձայնութեամբ եւ գնահատանքով վաւերացուեցաւ, Պրն. Յարութիւն Ամբակումեանի առաջարկով եւ Պրն. Թորգոմ Զապունեանի երկրորդումով:

Դպրաց Դասի տեղեկագիրն ալ Պրն. Գրիգոր Էլմասեանի առաջարկով, երկրորդուելով Պրն. Եզնիկ Պոյաճեանի կողմէ միաձայնութեամբ վաւերացուեցաւ:

Պրն. Հրանդ Սուին ուզեց հասկնալ թէ ինչո՞ւ մեր քոյր եկեղեցւոյ հոգեւոր հովիւը կը ջանայ միջամտել դպրաց դասի երգեցողութեանց:

Ատենապետ Վարդան Վարդանեան ըսաւ թէ այդ կը պատահի երբ Դպրապետը ներկայ չէ միայն:

Ընդհանուր ժողովի Ատենապետը հրաւիրեց ընտրողական յանձնախումբի խօսնակը՝ Պրն. Հրաչ Պոյաճեանը, ժողովականներուն բացատրելու քուէարկութեան ձեւին եւ իրաւասութեանց մասին:

Ան, իր բացատրականը տալէ յետոյ, ծխական Խորհուրդի թեկնածուները ծանօթացուց ժողովականներուն, անոնց անունները տալով եւ զիրենք մի առ մի ոտքի հանելով:

Մինչ այդ ընտրողական յանձնախումբի միացեալ անդամները սկսան բաժնել երեք գունաւոր էջերէ բաղկացած քուէներու ցանկը:

Պրն. Հրաչ Պոյաճեան յայտարարեց թէ անոնք որոնք կը փափաքին նոր անուններ աւելցնել ցանկերու վրայ, հիմա է ժամանակը:

Պրն. Թազուր Յոքեան խօսք առնելով իր զարմանքը արտայայտեց ըսելով թէ՛ ինք շաքաթներ առաջ դիմած էր ընտրողական յանձնախումբին որպէս թեկնածու, եկեղեցւոյս պատգամաւորի, եւ սակայն իր անունը ցանկին վրայ չէ դրուած:

Պրն. Հրաչ Պոյաճեան պատասխանեց ըսելով թէ, քանի որ եկեղեցւոյ ծարտարագէտն էք, եւ վճռողի պաշտօնեայ կը համարուիք մենք միաձայնութեամբ որոշեցինք ձեր անունը ՚՚քոնֆլիքդ աֆ ինդըրէսթ՚՚-ի հասկացողութեան տակ, ցանկին վրայ չդնենք:

Պրն. Թազուր Յոքեան հակամտեց ըսելով թէ, առաջնորդարանի քարտուղար Պրն. Սթոնսըն-ը իրեն յայտնած է թէ իրենց ՚՚քոնֆլիքդ աֆ ինդըրէսթ՚՚-ի բնոյթ չեն տեսներ եւ ձեր թեկնածութիւնը օրինաւոր է՛՛:

Այդ պահուն Պրն. Գրիգոր Էլմասեան յայտարարեց որ իր թեկնածութիւնը պատգամաւորներու ցանկէն դուրս կը քաշէ:

Պրն. Հրաչ Պոյաճեան յայտարարեց որ ներկաները Պրն. Գրիգոր Էլմասեանի անունը ցանկէն վերցնեն եւ տեղը Պրն. Թազուր Յոքեանի անուն դնեն:

Չեռնարկուեց աւ քուէարկութեան եւ աւարտին կարճ դադար մը տեղի ունեցաւ:

Ապա Պրն. Հրաչ Պոյաճեան ժողովականներուն յայտնեց թէ, հայրենի ականաւոր վեպասան Պրն. Սերօ Խանզաղեանը արդէն հոս է եւ կը փափաքի պահ մը մեր հետ ըլլալ: Ծափահարութիւններով սրահ մուտք գործեց հայրենի հիւրը, եւ իր գրական-

նութեան մասին խօսեցաւ, հայրենասիրական արտայայտութիւններով հմայեց ներկաները, քաջալերեց ու շնորհաւորեց ներկաները իրենց տարած աշխատանքին համար, եւ ծափահարութիւններով մեկնեցաւ սրահէն:

Մինչ այդ ժողովը իր ընթացքը շարունակեց:

Գրաւոր առաջարկներ ներկայացուեցան Ընդհ. ժողովի դիւանին:

Պրն. Սարգիս Տէքիրմէնճեան - "Նկատի առնելով մեր եկեղեցւոյ կանոնադրութեան յօդուած 15-ի 7-րդ գլուխը." կ'ըսէ թէ "ծիական ժողովի որոշումները պէտք է ժողովի թուականին յաջորդող 4 շաբաթներուն ներկայացնել թեմական խորհուրդին առ ի վաւերացում, եւ նկատի առնելով թէ, կրնայ 4 շաբաթներ եւս առնել մինչեւ վաւերացում, եւ այսպէս 8 շաբաթներ կրնան անցնիլ, պիտի առաջարկեմ որ յառաջիկայ ընդհանուր անդամական ժողովը գումարուի ամենաուշը Փետրուար ամսուն առաջին շաբաթը, որպէսզի գէթ Ապրիլ ամսուն նոր ծիական խորհուրդը իր պաշտօնին կոչուած ըլլայ եւ անցնի աշխատանքի:"

Առաջարկը միաձայնութեամբ ընդունուեցաւ եւ վաւերացուեցաւ:

Պրն. Մուրատ Պահուտեան - "Նկատի առնելով թէ մեր ընդհանուր ժողովներու ընթացքին ժամավաճառութիւն կըլլայ, ատենագրութեանց ընթերցումները, կ'առաջարկեմ որ հետ այսու ընդհանուր ժողովի հրաւերին հետ միասին դրկուին նաեւ թուոր տեղեկագիրները ժողովի ընթացքին ընթերցման ժամանակը խնայելով:"

Առաջարկը միաձայնութեամբ ընդունուեցաւ եւ վաւերացուեցաւ:

Պրն. Հրաչ Եիշմանեան - առաջարկեց որ "Ս. Երրորդութիւն եկեղեցին Ապրիլ 24-ի նահատակաց Տօնին, կազմակերպէ եւ մասնակցի միայն միջ եկեղեցական տօնակատարութեանց 1983-էն սկսեալ, առանց մասնակցութեան, մշակութային, բարեսիրական, քաղաքական կազմակերպութիւններու:"

Այս հարցի առնչութեամբ, ժողովականներ տարբեր գաղափարներով արտայայտուեցան: Եկեղեցւոյս հովիւը ժողովականներուն բացատրեց թէ եկեղեցին իր բարձրութեան վրայ պէտք է որ մնայ, եւ Ապրիլ 24-ը միջհարանուանական կերպով միայն յիշատակէ:

Օրուայ ժողովի ատենապետն ալ արտայայտուեցաւ եւ ըսաւ թէ եկեղեցին թող հովանաւորէ եւ կամ հովիւը նախագահէ եթէ հրաւիրուի, ու քանանք կրօնական հանգամանքով յիշել մեր նահատակները թոյլ տալով միւս քաղաքական, բարեսիրական կամ մշակութային կազմակերպութիւններն ալ իրենց գիտցած ձեւով յիշատակելը:

Ժողովս մեծամասնութեամբ մերժեց առաջարկը: Միայն 4 դեր քուէներ տրուեցաւ:

Օրուայ Ատենապետ վարդան վարդանեանը դիւանի անունով շնորհակալութիւն յայտնեց ժողովականներուն, իրեն հանդէպ եղած գնահատանքի խօսքերուն եւ ծափահարութիւններուն համար, որոնք արտայայտուեցան Պրն. Եղուարդ Տէօվլէթեանի կողմէ:

Պրն. Սեդրակ Ատուրեան թելադրեց որ յաջորդ ընդհանուր ժողովին "ձայնաերիզ" գործածուի:

Պրն. Մարտիկ Փափազեան թելադրեց որ ծխական խորհուրդի գանձապահը չ' ծանրաբեռնուի՝ որպէսզի ինք կարենայ իր հաշիւներով զբաղիլ, փոխանակ օտարներու մեծ գումարներ տրամադրելու:

Քուէախոյզ յանձնախումբը մօտ մէկ ու կէս ժամեր վերջ քուէարկութեանց արդիւնքը ներկայացուց հետեւեալ կերպով:

Իրաւասու անդամներու թիւ 126 որոնք մասնակցած են քուէարկութեան

ծխական խորհուրդ:- (2 տարուան շրջան)

Պէթի Ունճեան	90	Քուէ	Ընտրուած
Շահան Տէյիրմէնճեան	84	,,	,,
Ղեւոնդ Խոսրովեան	79	,,	,,
Մատթ Բ. Մամուրեան	77	,,	,,
Հայկ Միսաքեան	70	,,	,,
Սարգիս Հիլինկիրեան	53	,,	Փոխ
Պերժ Թուղլուեան	52	,,	,,
Հէրի Ամթակումեան	45	,,	,,
Սարգիս Գարագաշեան	22	,,	,,

Թեմական Պատգամաւորներ:- ԳԱՆԱՏԱԿԱՆ ԹԵՄ

Հրանդ Սուին	104	Քուէ	Ընտրուած	3	Տարիներ
Բենիամին Մամուրեան	89	55	,,	3	,,
Հայկ Սէլեան	86	,,	,,	3	,,
Պարգեւ Խոճաճեան	80	,,	,,	2	,,
Հրաչ Պօյաճեան	76	,,	,,	2	,,
Ալեքսան Պալթայեան	69	,,	,,	1	,,
Սարգիս Հիլինկիրեան	56	,,	,,	1	,,
Մուրատ Պահուտեան	55	Քուէ	Փոխ		
Թազուր Յորեան	49	,,	,,		
Մատթ Յ. Մամուրեան	36	,,	,,		
Կարօ Մարթին	34	,,	,,		
Յարութիւն Շսայեան	32	,,	,,		

Թեմական Պատգամաւորներ:- ԱՄԵՐԻԿԵԱՆ ԹԵՄ

Մինաս Սէլեան	97	Քուէ	Ընտրուած
Լեւոն Շազըճեան	67	,,	,,
Պետրոս Գոգորեան	50	,,	,,
Սարգիս Տէյիրմէնճեան	48	,,	Փոխ
Սամուէլ Օրջանեան	34	,,	,,
Մուրատ Պահուտեան	30	,,	,,
Նշան Մանճըլըքեան	15	,,	,,
Յարութիւն Շսայեան	8	,,	,,

Ընտրողական Յանձնախումբ

Մինաս Սէլեան	Ընտրուած
Հրաչ Պօյաճեան	,,
Ժիրայր Երէցեան	,,
Հրանդ Սուրին	,,
Սարգիս Տէքիրմէնճեան	,,

Հաշուեքներ Յանձնախումբ

Սիւզան Մանկոյեան	Ընտրուած
Յարուսթիւն Եսայեան	,,
Կրէկըրի Գասպարեան	,,

Ընտրողական Յանձնախումբի աշխատանքը վերջացած ըլլալով, Ատենապետ Պրն. վարդան Վարդանեանը հրահրեց մեր հոգեւոր հովիւ Տ. Յուսիկ Բհնյ. նշանեանը, աղօթքով փակելու ժողովը:

Ժողովը փակուեցաւ երեկոյեան ժամը 10:30-ին:

Ատենադպիր

Հայկ Միսաքեան

Նախագահ

Յուսիկ Բհնյ. նշանեան
Տ. Յուսիկ Բհնյ. նշանեան

Ատենապետ

Վարդան Վարդանեան
Վարդան Վարդանեան